Տիրույթ	
Որակի տիրույթ	Առաջնորդություն, ռազմավարություն, քաղաքականություն և մարդկային ռեսուրսներ
Կապ որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱՁԵՈՒ չափանիշներ՝ 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.7, 3.1, 3.2, 3.3, 3.5, 3.6, 3.7
Գործողության տարիներ	2021-2025թթ.
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	01
Տիրույթի պատասխանատու	Տնօրեն

Ռազմավարական նպատակները

1. ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները:
2. Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում:
3. Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում:

Թիրախները

1. Ուժեղացնել կազմակերպության որակի ներքին ապահովման համակարգի կարողությունները:
2. Իրականացնել հավատարմագրման գործընթացն իրականացնող մասնագետների և աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացում:
3. Ամրապնդել ֆինանսական կայունությունը:
4. Խթանել մասնագիտական ոլորտում լավագույն փորձի տարածումը և խրախուսել մասնագիտական կրթության նորարությունը:
5. Մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցության և օտարերկրյա գործակալությունների հետ համագործակցությունը խորացնելու և լավագույն փորձի միջոցով ամրապնդել միջազգային գործընկերությունը:
6. Հաշվի առնելով հայկական սփյուռքի ներուժը՝ նպաստել առաջատար ՄՈՒՀ-երում կրթություն ստացած մարդկանց փորձի փոխանցմանը:

Գնահատման ցուցիչները

1. ՈԱԱԿ-ի աշխատակիցները կիսում են ՈԱԱԿ-ի ապագայի ընդհանուր տեսլականը:
2. ՈԱԱԿ-ը դառնում է գրավիչ գործատու մասնագիտական կրթության ոլորտի փորձառու մասնագետների համար՝ ներգրավելով վերջիններիս իր տարաբնույթ ծրագրերում՝ ապահովելով մարդկային ռեսուրսների կառավարման ճկուն քաղաքականություն:
3. ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողներին որակի շարունակական մշակույթի խրախուսման և ամրապնդման համար:
4. ՈԱԱԿ գործընթացները շահակիցների կողմից ճանաչվում են որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր:

Հիմնական գործողությունների նկարագրությունը

Հիմնվելով հինական լիազորությունների, ռազմավարական նպատակների և թիրախների վրա՝ տնօրենը կազմակերպում և իրականացնում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը, ապահովում է կայուն աշխատանքային միջավայր, շահակիցների հետ անընդհատ կապ:

Գնահատումը

1. Ռազմավարական ծրագիրը գնահատվում է յուրաքանչյուր տարի՝ օգտագործելով չափման տվյալները և ցուցանիշները, շահակիցներից ստացված տվյալները և օրենսդրական փոփոխությունները: 2. 3 տարին մեկ անգամ իրականացվում է մասնագիտական կրթական համակարգի ամբողջական վերլուծություն՝ պարզելու ՈԱԱԿ ազդեցությունը մասնագիտական կրթական համակարգի վրա: 3. Տարեկան թեմատիկ վերլուծություններ՝ ոլորտում առկա խնդիրները վեր հանելու և ՈԱԱԿ հիմնական ուղղությունների դրական ազդեցությունը կրթական համակարգի վրա պարզելու համար: 4. Շահակիցների և ՈԱԱԿ աշխատակազմի շրջանում ղեկավարության գործունեությունից բավարարվածության գնահատման նպատակով անցկացվում է տարեկան հարցում:
Պատասխանատվությունը
Տնօրեն
Հաշվետվությունը
1. Տարեկան հաշվետվություններ (ֆինանսական, գործունեության) հոգաբարձուների խորհրդին: 2. ՈԱԱԿ -ը ներկայացնում է հաշվետվություններ ֆորումի և համաժողովի ընթացքում:
Բարելավումը
Տարեկան և ռազմավարական ծրագրերի պարբերաբար վերանայում՝հիմնվելով գնահատումների, հարցումների արդյունքների, օրենսդրական փոփոխությունների և շահակիցների հետ հանդիպումների արդյունքում:
Կարգավորող փաստաթղթերը
Ներքին 1. ՈԱԱԿ կանոնադրություն 2. ՈԱԱԿ 2021-2025թթ. ՌԾ և ճանապարհային քարտեզ 3. ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն և ընթացակարգ 4. ՈԱԱԿ էթիկայի և վարքագծի կանոններ 5. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության ձեռնարկ 6. ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ ***Արտաքին*** 1. Մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգ 2. Հավատարմագրման պետական չափանիշներ 3. ՀՀ օրենքները «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» 4. «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք:

Հաստատված՝
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան

18.10.2021թ.